# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03

«ՍՄԿՀ-ԿՔՄԿ-ԳՀԱՊՁԲ 19/01» ծածկագրով գնանշման հարցման միջոցով ծառայություն կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

(հայտերի գնահատման արդյունքների հաստատման)

ք. Կապան <u><< 19 >> << օգոստոս>> 2019 թ., ժամը</u>

<u>10:00</u>

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գրիգորյան

Անդամներ՝ Գ. Արզումանյան

Ք. Սլոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ս.Զախարյան

«ՍՄԿՀ-ԿՔՄԿ-ԳՀԱՊՁԲ 19/01» ծածկագրով գնանշման հարցման **ընթացակարգի արդյունքների հաստատման մասին**

1.Հիմք ընդունելով մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ եզրակացությունն այն մասին, որ նշված ծածկագրով մրցույթի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ՝ ,,Ա.Զ. Գնորգ Եղիազարյան,,-ը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունի՝ 3 000/երեք հազար/ ՀՀ դրամ, որը ,,Գնումների մասին,, օրենքի հոդված 6.1 կետի 2 ենթակետի համաձայն չի գերազանցում գնանշման հարցման ընթացակարգի ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը՝ 44300/քառասունչորս հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ, ու ոչ ավելի, քան հիսուն հազար ՀՀ դրամը, հանձնաժողովը որոշեց ,,Ա.Զ. Գնորգ Եղիազարյան,,– ի ներկայացված հայտը տեխնիկապես և որակապես գնահատել բավարար:

2.Ընդունել ի գիտություն, որ բավարար գնահատված և հաստատված ,,Ա.Զ. Գնորգ Եղիազարյան,,-ի կողմից ներկայացված՝ գնանշման հարցման ընթացակարգի հայտով ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը՝

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | Չափման միավորը | Մասնակցի անվանումը /անունը/ | |
|---|---|---|---|---|
| | | | ,, Նոյավան,,ՍՊԸ | |
| | | | Գինն առանց ԱԱՀ-ի | Գինն ԱԱՀ-ով |
| 1 | Ա/Ձ Արմեն Ցլիկյան | դրամ | - | 5 195 000 |
| 2 | Ա.Զ. Գնորգ Եղիազարյան | դրամ | - | 4 430 000 |

3.Հիմք ընդունելով վերոգրյալը՝ «ՍՄԿՀ-ԿՔՄԿ-ԳՀԱՊՁԲ 19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հաղթող ճանաչել Ա.Զ. Գնորգ Եղիազարյան -ին՝ N 1 չափաբաժնի մասով:

4. Հիմք ընդունելով ,,Գնումների մասին՝ ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը անգործության ժամկետը տվյալ ընթացակարգի համար 5 օրացուցային օր է: